



23

ԱՂԵՐՍ ԱՌ ՍՈՒՐԵ Ա.ԱՏՎԱԾԱԾԻՆ

ՄՐՏԻ ԽՈՐԵՐԵՆ Ա.ԱՏՏՈՒԾՈ ՀԵՏ ԽՈՍՔ

Ա. — Ու հիմա, այսքան հուսահատություններե և աճարկու սրտաբեկություններե, աստվածային բարկությանց պակուցիչ սաստկություններե ետքը, թախծությամբ իսպառ տագնապած, կաղաշեմ քեզի, Սուրբ Աստվածածին: Հրեշտակ՝ մարդոցմե, մարմնատեսիլ քերովքե, երկնավոր թագուհի, անխառն՝ ինչպես օդը, մաքուր՝ ինչպես լույսը, անշաղախ՝ ինչպես բարձրացած արեին պատկերը, գերազանց քան անկոխելի սրբություն սրբությանցը, գուն, երանական խոստումին տեղը, շընչավոր եղիմը, անմահ կյանքի ծառը՝ բոցեղեն սուրով շրջապատված, բարձրյալ Հորմեն զորացած և հովանավորված, Հոգիին հանգիստովը պատրաստված և մաքրագործված, Որդիին բնակությամբը հարդարված տաղավարված, Անոր՝ որ Հորը Միածինը, քու անդրանիկդ, ծնունդով քու որդիի է, իսկ արարչությամբ՝ Տեր: Անաղու մաքրությանդ հետ նույն ատեն անքիծ բարի, անարատ սրբությանդ հետ, խնամակալ բարեխոսու: Ընդունե՝ դավանողիս այս մաղթանքն ու աղերսը, ու ասոր հետ միացնելով իմ նախակին ներբողիս խոսքերը, խառնե՝ քու պաղատանքներու: Հյուսե՝, միացուր իմ մեղավորի դառն հեծությունները քու երջանիկ ու խնկավորված հայցվածներուդ, ով տունկ կյանքի օրհնված պտուղին, որպեսզի քենն միշտ օգնված և բարեգործված, քու մաքրա-

կան ծնելությանդ ապավինած և անով լուսավորված, ապրիմ քու տիրոջդ և զավկիդ՝ թրիստոսի համար:

Բ. — Օժանդակե՝ ինձի աղոթքիդ թերովք, գուն որ խոստվանված մայրն ես ողջերու. որպեսզի աշխարհի այս հովիտեն ելած ատենս, առանց տանջանքի երթամբ քու պատրաստած կյանքիդ օթևանները, որպեսզի թեթև ըլլա անօրենություններով ծանրացածիս վախճանը: Իմ հոգեւարքիս օրը բերկության տոն ըրե՝ ինձի, ով Եպայի երկունքին ողջնըընողը, բարեխոսե՝, խնդրե՝, աղաշե՝, վասնզի քու անձառելի մաքրությանդ հետ ես կհավատամբ քու խոսքիդ ընդունելությանը. արցունքովդ օգնե՝ ինձի պես վտանգվածին, կիներու մեջ գովվա՞ծ զիս հաշտեցնելու համար ծովեկի եկուր, Աստուծո՞ ծնողը. հոգա՝ ինձի պես թշվառին համար, խորա՞ն Բարձրյալին. ձեռք տուր ինձի պես ինկածին, երկնային տաճար. քեզով փառավորք որդիիդ՝ աստվածորեն քավություն և ողորմություն հրաշագործել տալով ինձի, ո՞վ Աստուծո աղախինը և մայրը. Թող քու պատիվդ ինձմով բարձրանա, ու իմ փրկությունս քեզմով երևի:

Գ. — Եթե ինձի գտնես՝ ով տիրամայր, եթե ինձի ողորմիս՝ սրբուհի. Եթե ինձի պես կորսվածը շահիս՝ անարատ. Եթե ինձի պես խրտչածը հանձանձես՝ երջանիկ. Եթե ինձի պես ամշածը առաջ մոտեցնես՝ բարեշնորհ.

եթե ինձի պես հուսահատածին միջնորդես, միշտ սուրբ կույս, եթե ինձի պես մերժվածը ընտանիցնես, ով Աստուծմէ մեծարված. եթե ինձի գութ ցուցնես՝ անհծոներ լուծող. եթե ինձի պես ծփացող մը կեցնես՝ ով հանդիսա, եթե հուզումներու խռովութենին հեռացնես զիս՝ ո՞վ խաղաղաբարար. եթե ճար մը զունես ինձի որ վրիպած եմ՝ զովեալ. եթե ինձի համար ուզես մեջտեղ ելնել՝ մահվան նահանջող. եթե իմ զառնությունս անուշես՝ ո՞վ քաղցրություն. եթե իմ բաժանումիս խրառոցը քակիս՝ հաշտություն. եթե իմ անմարդությունս չնչես՝ եղծումն ընդունող. եթե փրկես զիս որ մահվան մատնված եմ՝ կենդանի լույս. եթե իմ լալուս ձայնը կտրես՝ ով բերկություն. եթե կազզուրես զիս որ խորտակված եմ՝ կյանքի դեղ. եթե ինձի պես

կործանվածին ակնարկես՝ հոգելից, եթե ողորմությամբ ինձի հանդիպիս՝ նվիրագործված կտակ... զոն, որ երջանիկ լեզուներու անրիծ շրթունքներն միայն կօրհնվիս, ահա բու կուսական կաթիզ մեկ կաթիլը իմ անձիս մեջ անձրենելով, կյանք կուտա ինձի, ո՞վ մայր՝ երկինքն ու ամբողջ երկիրը ստեղծող բարձրյալ Տեր Հիսուսին, զոր անճառապես ծնար բովանդակ մարմինովն ու համայն Աստվածությամբը. որ կփառավորվի Հորը և Սուրբ Հոգիին հետ, իր էսթյամբը և անքնությամբը մեր բնության միացած: Ամեն բան է ան. ու ամեն բանի մեջ, մեկը՝ երրորդութենին, փառք երեն, հավիտյանս հավիտենից. ամեն:

(Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Բան 2)

